

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Հաղործի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի (դաստիարակի) պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013 թվականի 25-26 և 2014 թվականի 23-24 համարներում ու տեղակայված են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան հոկտեմբերի 24-28-ը ընկած ժամանակահատվածում. մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

ՑՈՒՑԱԿ

Հաղործի շրջանի հանրակրթական դպրոցների ուսուցչի թափուր տեղերի

ՀՀ	Ուսումնական հաստատության անվանումը	Առարկա	Ժամաքանակ
1	Հաղործի Մ. Մանվելյանի անվան միջն. հոսքային դպրոց	Ֆիզկուլտուրա	21
2	Քուրաթաղի Գ. Գասպարյանի անվան միջնակարգ դպրոց	Աշխարհագրություն	12
3	Ակնաղբյուրի Վ. Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոց	Անգլերեն	18
		Իֆորմատիկա	8
		Աշխարհագրություն	10
4	ՈՒԽատաձորի Ա. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց	Ռուսաց լեզու	16
		Մաթեմատիկա	6

		Ինֆորմատիկա	6
		Աշխարհագրություն	9
5	Զրակուսի միջնակարգ դպրոց	Անգլերեն	16
6	Առաջամուղի Զ. Եսայանի անվան միջնակարգ դպրոց	Հայոց եկեղեցու պատմություն	6
		Ինֆորմատիկա	6
7	Առաքելի Ս. Սեյրանյանի անվան միջնակարգ դպրոց	Անգլերեն	14
		Ինֆորմատիկա	5
		Քիմիա	7
		Կերպարվեստ	5,5
		Դասվար	12
8	Խանձաձորի Հ.Այվազյանի անվան հիմնական դպրոց	Քիմիա, կենսաբանություն	10
		Աշխարհագրություն	6
9	Խանձաձորի Հ.Այվազյանի անվան հիմնական դպրոցի Հայկականի մասնաճյուղ	Քիմիա-կենսաբանություն	8
		Հայոց լեզու և գրականություն	15
10	Բանաձորի հիմնական դպրոց	Անգլերեն	12
		Ֆիզիկա	7
		Մաթեմատիկա	20
11	Արևշատի Մ. Զաքարյանի անվան հիմնական դպրոց	Ֆիզիկա	12
12	Տումու Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց	Քիմիա	11
		Մաթեմատիկա	28
13	Դրախտիկի Վ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց	Ֆիզիկա	10
14	Մոխրենեսի միջնակարգ դպրոց	Անգլերեն	8
15	Թաղոտի միջնակարգ դպրոց	Անգլերեն	10